



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**ԱՂՕԹԸ՝ Ի ԽՆԴԻՐ ԼԻԲԱՆԱՆԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ
 ԵՒ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ**

- ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՉՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ
 ՅԱՅՏՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՊԱՏՈՍԻՆ

Աւելի քան շաբաթ մը ի վեր, Լիբանան ենթակայ է իսրայելեան յարձակումներու, որոնք ամբողջ երկիրը մատնած են արիւնաքամութեան եւ մարդկային, ապահովութեան ու ընկերային ահաւոր տագնապներու:

Յարձակումներուն հետեւանքով, ինկած են բազմահարիւր զոհեր, մեծ մասամբ՝ անմեղ քաղաքայիններ: Քանդուած է երկրին ենթակառոյցը:

Ողբերգական այս կացութեան ի տես, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեքշաբթի, 18 Յուլիս 2006ին հեռաձայնային հաղորդակցութեան մէջ մտաւ Լոս Անճելըսի մօտ Լիբանանի գլխաւոր հիւպատոս Ն.Վ. Շարպէլ Ուահպէի հետ, յանուն Թեմիս ժողովականութեան ու շրջանի հայութեան՝ ցաւակցութիւն յայտնեց ինկած զոհերուն համար ու մաղթեց, որ միջազգային ընտանիքը չթերանայ այս ողբերգութեան վերջ տալու իր առաքելութեան մէջ: Հիւպատոսը Առաջնորդ Սրբազանին որոշ տեղեկութիւններ փոխանցեց ստեղծուած ահաւոր կացութեան մասին եւ Լիբանանի պետութեան անունով խնդրանք ներկայացուց, որ շրջանիս հայութիւնը եւս մարդասիրական օժանդակութիւն տրամադրէ աղետահար ժողովուրդին: Հիւպատոսարանը կը ծրագրէ կազմել յատուկ յանձնախումբ մը, որ պիտի համակարգէ օժանդակութիւնները:

ԱՂՕԹԸ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Յայտնեցք նաեւ, որ տուեալ պայմաններուն նկատառումով ու Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, յառաջիկայ Կիրակի, 23 Յուլիսին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Տէր Ողորմեայի յատուկ աղօթք պիտի բարձրացուի անմեղ զոհերուն համար:

Այսու կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ Կիրակի օր եկեղեցի փութալով՝ միասնաբար աղօթք բարձրացնէ ի խնդիր Լիբանանի խաղաղութեան, անվտանգութեան եւ միասնութեան պահպանումին::

ԴԻՒՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

PRESS RELEASE

PRAYER FOR PEACE AND UNITY IN LEBANON

**- PRELATE PLEDGES SUPPORT TO THE
CONSUL GENERAL OF LEBANON**

For over a week now Lebanon has been subject to attacks by Israel, which has left the country in bloodshed and resulted in a humanitarian and security crisis.

The attacks have left hundreds of Lebanese dead, mostly innocent citizens, and damaged the infrastructure of the country.

In light of this tragedy, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, spoke with Consul General Charbel Wehbe on Tuesday July 18, expressing his sympathy and that of the entire Armenian community for the casualties the country has suffered, wishing for unity and solidarity to prevail in Lebanon and among the Lebanese people. The Consul General spoke of the situation in Lebanon, and on behalf of the government requested that the Armenian community offer any humanitarian assistance within their means to the civilian victims. The Consulate is planning to designate a special committee to coordinate these humanitarian efforts.

On Sunday July 23, a special prayer will be said in all Prelacy churches for the lives lost in the fighting.

We urge our faithful to pray for peace, security, and unity in Lebanon.

WESTERN PRELACY DIVAN